

Թէ Երեմիայի մնացեալ անտիպ հեղինակութիւններու հրատարակութիւնն ալ չյապաղէր, որպէսզի ժէ. դաւրուն փայլող այդ ականաւոր Հայուն կեանքը լրիւ լուսաբանուէր՝ առանց մթին կամ անծանօթ անկիւն մը մնացած ըլլալու: Տոքթոր Թորգոմեան և Հ. Ա. կինեան արդէն այդ ուղղութեամբ բաւական արդիւնաւոր աշխատանք կատարած են իրենց մեծարժէք հրատարակութիւններով: Մենք եւս յարմար առիթ կը համարինք սոյն ներածական ուսումնասիրութեանս մէջ Զէլէպիի ու իր գերդաստանի անդամոց կեանքի անյայտ կողմերը երեւան բերել: Մեր ազբիւրներն են հեղինակի ներկայ Օրագրութիւնն ու Յաւելուածը, ինչպէս նաև այլոց կողմէ գրուած քանի մը նամակներ, և մանաւանդ Երուսաղէմի պատրիարք Մինաս Ամգեցիի Օրագրութիւնը, որ յոյժ արժանահաւատ ու վաւերական ազբիւր մըն է այս մասին: Աւելորդ կրկնութենէ զգուշանալու համար պիտի չներկայացնենք Երեմիայի ու իրեններուն կեանքի այն մասերը, որոնք երեւցած են արդէն Տոքթոր Թորգոմեանի և Հ. Ա. կինեանի յիշեալ աշխատութեանց մէջ:

* * *

Օրագրութեմէս ճշգրտած է Երեմիայի ծննդեան թուականը, որ է 1637 Մայիս 13: Անիկա գեո 12 տարին չլրացուցած⁽¹⁾, 1649 Փետրուար 14ին, Տեառնընդառաջի տօնին, Կ. Պոլսոյ վեց եկեղեցիներէն հաւաքուած «բազում» ընկերներու հետ Գումգափուի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ դպրութեան չորս աստիճան կ'ընդունի Երուսաղէմի նուիրակ Սաչատուր վարդապետէն (Օրագր. էջ 6):

(1) Հ. Ա. կինեան 12-13 տարեկան էր այն ատեն կը գրէ (Զէլէպի, էջ 34):